



Թիֆլիս և այդ օր էլ հողին ենք յանձնելու երրորդ կորցրածին:

Հանդիստ անմահ գործչին:

Հ. Տ.-Աս.

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԽՍՏԻՍԵԱՆ

Դարձեալ կորուստ...

Բայց այս անգամ կորցնողը Բագուն է և ոչ Թիֆլիսը, իսկ հասարակութեան ծառայելը հայրենիք չունի:

Բաղուից գուժեցին, որ այնտեղ վախճանուել է Հայոց Կուլտուրական Միութեան նախագահ և յայտնի հասարակական գործիչ Կոստանդին Խատիսեանը:

Թիֆլիսում լուր էր ստացուած, որ նա ծանր հիւանդ է, բայց ոչ օք չէր սպասուած այդքան արագ ու անսպասելի լուծման կեանքի հանգոյցի:

Նա վախճանուեց փորձարկնքից:

Կ. Խատիսեանը առաջին ուսանալ կին գրող տիկին Մարիամ Խատիսեանի որդին է, ծնուել է Թիֆլիսում 1864 թուականին, ուսել է Թիֆլիսի Բէյալիական ուսումնարանում, յետոյ Պետերբուրգի հանքային Ինստիտուտում, երբ նա ուսանող ժամանակ զնայ Պոլիս հայոց լեզու սովորելու և վերադառնալով Պետերբուրգ իր մի խումբ ընկերների հետ հիմնեց հրատարակչական մի ընկերակցութիւն, որ հայ ժողովրդի մէջ հայ գիրք պիտի տարածէր:

Երբ նա մտաւ հասարակական կեանքը, արդէն գիտէր թէ ինչ կերպ կարող է ծառայել իր ազգին և նրա եռանդուն աշխատութեան արդիւնքն եղաւ Բագուի «Կուլտուրական ընկերութեան» հիմնելը, որ մեծ ծառայութիւններ է անում ազգին:

Երկուշաբթի օրը՝ 27-ին հոկտեմբերի նրա սգազագաղը հաննելու է



ՅՕԲԵԼԵԱՆԻ ԱՌԹԻԻ

Մեծ յօրելեանի առթիւ բազմաթիւ դրքեր լոյս տեսան, սակայն մենք հնարաւորութիւն չունեցանք ծանօթացնելու մեր ընթերցողներին այդ հրատարակութիւնների հետ, որովհետեւ հայոց մէջ ամեն ինչ կայ ունի որոշ տեղեկացիայի և ուղղութեան հետ: Ահա մի տարի է, որ «Արփիշ»-ն կանոնաւոր հրատարակում է, սակայն մեր քթին կպած «Հայոց Հրատարակչական ընկերութիւնը» քաղաքախարութիւն չունեցաւ զոնէ իր մի օրն է հրատարակութիւն ուղարկէր խմբագրութեանս Ասում են, որ լոյս է տեսել Ս. Նազարեանի գործոց փոփոխութեան, բայց մենք բազմ չունեցանք տեսնելու այդ գիրքը: Լոյս տեսան և ուրիշների հրատարակութիւններ՝ «Մովսէս Խորենացի» ուսումնասիրութիւն և համեմատական հրատարակութիւն, «Շողակաթ» (Էջմիածնում) որի մէջ են անփոփոխուած հին գրչութեան բազմաթիւ օրինակները:

Մենք առիթ ունեցանք տեսնելու Մեսրոպ վ. Մաքսուտեանի մանրանկարչական աշխատասիրութիւնները՝ հայկական գունաւոր այբուբենը ամենայն նորութիւններով ընդօրինակած հին ձևագիրներից, որոնք շատ զնանասելի և հազուադիւր գրական նորութիւններ են հայ գրչի պատմութեան համար, սակայն դեռ ևս ձևագիր են և հ. Մաքսուտեանը հրատարակչի պէտք ունի. այս գործին կը հարկաւորուի զոնէ մի հազար բուրի, բայց կատարած դերը մեծ կլինի: Սրանց հետ զուգընթացաբար հ. Մաքսուտեանն ընդօրինակել է և բազմաթիւ գորգեր:

Լոյս տեսաւ նաև «Ղուկասեան» գրադարանի հերթական գիրքը՝ «Կորիւնի Վարդ Մեսրոպայ» և ինչպէս լսում ենք արժէ ծ կոպէկ, որ շատ էժան է:

Գուցէ կան և այլ հրատարակութիւն-

ներ, սակայն մենք հնար չունենք այստեղ
թուելու, որովհետև մեր խմբագրութեան
չեն հասել:



ԵՐԶԱՆԿՈՒԹԵԱՆ ՅԵՏԵՒԻՑ

Եւ նա զարկեց մեղմ, թախճագին
«Սաղի» հնչուն լարերին,
Սաղը ձայնեց, սազն արտասուեց
Եւ նա ողբաց ու երգեց.

«Ողջ աշխարհում ես ման եկայ,
«Շատ ման եկայ երգելով,
«Երջանկութիւն հէջ չը գտայ
«Միշտ տառապանք տեսնելով...
«Արդեօք լեռներն, այս ճնճղուկներն
«Ունեն ցաւոտ երազներ,
«Որ երգ հիւսեն, ողբ ահարկու,
«Թէ, թշուառ են անլեզու»...

Ու պաղանեզ փշեց քամին,
Հովտի վրրով ճախրելով՝
Ճնճղուկները լուսաբացին
Հաւաքուեցին երգելով.

«Դուք սև մահի զոհ որդիներ,
«Ելէք բռնենք լէյլիներ,
«Սենթ պարերով թունդ տաք լեռներ,
«Մոռնանք մեր ցաւ, մեր վշտեր»...

Այս երգելով թռան սարին,
Ճնճղուկները վշտալից,
Թռան սարի սէզ կատարին
Բնրձը դիւթող վայրերից...

Եւ նա զարկեց զիւ, վերըստին
«Սաղի» հնչուն լարերին,
Սաղը ձայնեց, սազն արտասուեց
Եւ նա ողբաց ու երգեց.

«Ողջ աշխարհում ես ման եկայ,
«Շատ ման եկայ երգելով,
«Երջանկութիւն հէջ չը գտայ,
«Միշտ տառապանք տեսնելով...

Պանարե

ԶԱՒԱՐԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ՇՈՒՐՉԸ

Անցեալ համարում մենք օգտուելով
վերջին տեղեկութիւններից ասել էինք, որ
Ս. Զաւարեանին թաղելու են Կ. Պօլսում,
սակայն իր հարազատների ու ընկերների
ձեռք առած միջոցներով կարելի եղաւ մար-
մինը փոխադրել Քիֆլիս և այս օրերս կը
հասնի քաղաքս, որտեղ և հողին են յանձնելու:



Սիսկոնի Զաւարեան

Պ Ա Տ Ր Ա Ն Ք

Ես չեմ հաւատում կեանքի թուլչութեան
Եւ ոչ էլ մարդկանց սուտ խորհուրդներին.
— Կեանքը բնութիւն շունի հանգրուան,
Աշխարհը անմիտ պատրանք է մի շար.
Տանջանքն անպակաս, կեղծիքն յարսճուն,
Քօլ տիեզերքում չը կայ մնայուն
Յաւիտենական հմայքը կեանքի:

Ծնում են մարդիկ և չգիտեն թէ
Ինչո՞ւ են ապրում, կամ ի՞նչի համար.
Ծաղկունքն աճում են, վիրստին թօշնում
Եւ մահն է թառում յաւիտենաբար...
Կեանքը պատրանք է տանջանքով լեցուն...

Նարզիկ

